

ԲԱՐԵԿԱՍԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ծովէն անցնելով՝ հասած էիր հոն՝

Ուր կը ննջես հիմա .

Լռած է աղօթքը ձեռքերուդ .

Ոչ մէկ ատեն մըմնջուած :

Աչքերուդ անհուն կարօտին մէջ

Երագուած աշխարհի մը տեսիլով

Թերեւս յարուցեալ աստուած մը ողջունեցիր...

Հին, խորհրդաւոր մագաղաթներէ երբեք չյայտնուած

Անունի մը գաղտնիքը տրուեցաւ քեզի,

Երբ խաւարին դռնէն անցար,

Եւ գերեզմանի մը սեմին վրայ սպասեցիր

Որ տալիք լռութեան

Հրաժեշտի երգը հնչեցնէր...

Հիմա խօսքը ուղեւոր մըն է շնչասպառ

Տիեզերքի նամբաներուն վրայ .

Ի՞նչ ըսել քեզի,

Երբ պատասխանը շիրմաքարի մը ծանրութիւնը պիտի ունենայ միայն...

Թերեւս վերագտած ես ժամանակի նետը բխրաւոր դարեր առաջ արձակուած,

Որ անբուժելի վէրք մը բացած էր սրտիդ մէջ .

Թերեւս լսեցիր առաջին գիշերն իսկ,

Երբ Առանձնութեան սպիտակ ջահը լուսաւորեց քեզ,

Այն երգը՝ որ հողին եւ ֆարին ծոցէն կը բարձրանար,

Եւ քեզ կ'օրորէր անձրեւահոս ֆաղցրութեամբ,

Ինչպէս եթէ վերածնած ըլլայիր դուն

Նոր կեանքի մը խորհուրդին մէջ...

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

ՅՈՒՇԵՐԳ

ԼՈՐԵ ՊԱՅՐԸՆԻ ՀԱՄԱՐ

Զըկայ ո՛չ մէկ երազանքի, երգի պուրակ՝

Ուր քու ժպիտդ ծաղկած չըլլայ,

Գեղեցկութեան կամ խորհուրդի

Վըսեմ կրակ՝

Ուր քու սրտիդ խունկն հոտեւան

Այլած չըլլայ .

Պատմական հին կամ նոր չարիք՝

Ուր դատաստանդ՝ դաշոյնի պէս

Փայլատակած, չանթած չըլլայ...

Ո՛չ մէկ մատեան հանճարաշունչ՝

Ուր ակնարկիդ աստղն հիացիկ

Ծաղած չըլլայ...

Սուրբ Ղազարու վանքն հայկական

Դեռ կը խաչատուր

Յիշատակիդ հըրախաղով :

Մըխիթարեան պարտէզին մէջ

Կ'երազէի ձիթենիիդ

Արծաթափայլ ճիւղերուն տակ...

«Հառաչանքի կամուրջն» հեռուն,

Ուր երեկոն կը նըւաղէր՝

Ուր կ'ընկըղմէր երանդապնակն

Երազնթաց կոնտրոլներուն,

Քու սիրտիդ մէջ օրերուն

Կը վախճանէր ներդաշնորէն...

Ու Մեսրոպեան հըրաշատառ

Հայ Քերականն՝

Ուր դուն ուսար

Նարեկացւոյ բարբառն անդրդ,

Լոյսն ակնարկիդ կը պարփակէր...

* * *

Պահ մը սարսեց քեզ Ալպիոնն

Իր մըշուշին, տառապառ խաւարին մէջ

Եւ արիւնեց քու քերթով

Հողիդ վսեմ .

Ու գերեզմար Ելլադային

Յաւն անպատում

Քեզ զալարեց...

Այնուհետեւ

Ալպիոնն մինչեւ Ռափէն,

Վենետիկէն մինչեւ Լեման,

Ակոսթոլի եւ Կոնթոս,

Նըւիրական Առաքելի

Եւ հերոսի քայլերդ տենդոտ՝

Կը տանէին քեզ մինչեւ հունկ

Զոհարեում...

Այլ մինչեւ լո՛յս

Եւ զիւթական անմահութիւն...

Ո՛վ, Զայտ Հարութ,

Դուն Պոտլէրի Ալպաթրոսին նըման չըքեզ,

Տառապեցար...

Թոխքիդ սահման ուրոնեցիր

Կապոյտ եթերն ազատութեան...

Ո՛վ վիրաւոր դուն Ալպաթրոս,

Ո՛վ կազ հեշտակ,

Դուն որ հողին վրայ մերթ երկշոտ

Եւ անճարա՛կ օրորուեցար՝

Աստղերո՛ւն մէջ կը ցանկայիր

Ընտրել կայանդ ազատատենչ,

Եւ ըմպել լո՛յսն յաղթանակին՝

Արդարութեան

Արեւահամ

Բաժակին մէջ...

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ